

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Полярная звезда № 12.— Պետր Սարուվէի խմբագրութեամբ լոյս տեսնող այդ շարաթական հանդէսի № 12-ի մէջ ապուած «Ե՛նչ է սոցիալիզմը վերնադրի տակ յայտնի ռուս տնտեսագէտ-հրապարակաբոս Մ. Տուզան»—Բարանովսկու յօդուածը՝ մասնանիշ անկողմ այն ահագին ծաւալի վրայ, որ օրէցօր ստանում է սոցիալիզմը, դանում է որ սոցիալիզմը, իբրև ռուսները զեռ շատ հետու է կատարելալ զիտական սիստեմի իդէալից: Ընդհանրապէս սոցիալիզմ կոչւում է քաղաքատնտեսական մի ուղղութիւն, որ ցանկալի է համարում արդիւնագործական միջոցների նկատմամբ մասնաւոր սեփականութեան ոչնչացումը և կարծում է թէ ժամանակակից հասարակական զարգացումը տանում է զէպի այդ ոչնչացումը: Մակայն արդիւնագործութեան համայնացումը սոցիալիստների համար միջոց է հասնելու մի նպատակի՝ ազատել մարդուն մարդու հարստահարութիւնից: Բայց արդիւնագործութեան համայնացումը զեռ խնքն ըստ ինքեան սոցիալիզմ չէ, առում է Տուզան—Բարանովսկին. այժմ էլ կան շատ սկզբունքական ընկերութիւններ, որոնց մէջ այս կամ այն կապիտալիստ անհատը չէ գործի տէրը, այլ բազմաթիւ բաժնետէրեր, որոնց թուին են պատկանում նաև այդ արդիւնագործութիւնների մէջ աշխատող բոլոր բանուորները, սակայն այդպիսի հրահայտական համայնացած և կենտրոնացած կապիտալիստական արդիւնագործութիւնն էլ այնուամենայնիւ չի կարող սոցիալիստական կոչուել: Յօդուածագիրը մի առ մի առաջ է բերում նշանաւոր սոցիալիստների որոշումները և եղբակցնում, որ ոչ մէկը ճիշտ չէ ամփոփում սոցիալիզմի էությունը: Սոցիալիզմը, իբրև ապագայ հասարակական կազմի իդէալ, անորոշ է և մշտնջապատ: Սոցիալիստական իդէալը անկարելի է հասկանալ առանց հաւասարութեան բազմաթիւ իսկ անհավասարութիւնը իրերի ընութեան մէջ է արմատացած: մարդիկ անհավասար են ծնւում իրանց ֆիզիքական, մտաւոր ընդունակութիւնների, բարոյականի

ճաշակի և այլ հակումներով: Ոչ մի հասարակական կազմ չի կարող վերացնել այդ բնական անհավասարութիւնը: Եւ ինչպէս ձգտել այդ անհավասարութիւնը վերացնելու: Միթէ ընդհանուր հավասարութիւնը երաշխաւորում է ընդհանուր երջանկութիւնը: Է՛հավասարութեան սկզբունքի տարրալուծումն է զլիսաւոր: Անս այդ հիմնական հարցի պատասխանն է որ տալիս է նոր ժամանակի ամենամեծ փիլիսոփայ Գանալը: Նրա հիմնական սկզբունքը այն է որ բոլոր մարդիկ ընութիւնից հավասար են, որքան է նրանք տարբեր լինեն իրանց յատկութիւններով և արժանիքներով: Նրանք հավասար են իրանց պայելու և բարատուր լինելու իրաւունքով, նրանք հավասար են այն յարգանքով որով մենք պէտք է վերաբերունք նրանց բոլորի շահերին: Նրանք հավասար են, որովհետև իւրաքանչիւր մարդու անձ ունի անսահման մեծ արժէք: Գանալը հետեւել կերպով է բնորոշում մարդու բնածին իրաւունքները, «միայն մի բնածին իրաւունք ունի մարդը. ազատութիւն» (ուրիշի կամայականութեան պարտադիր ներգործութիւնից անխտութիւն) որչափով այդ ազատութիւնը համապարունակելի է միւս մարդկանց պատուութեան հետ. դա միակ, սկզբնական իրաւունքն է, որ յատուկ է իւրաքանչիւր մարդու հէնց այն պատճառով որ նա մարդ է: Բնածին հավասարութիւնը—այսինքն՝ իւրաքանչիւրի իրաւունքը ուրիշի նկատմամբ աւելի պարտականութիւններ չկրել, քան այդ վերջինը կրում է առաջինի նկատմամբ, ինչպէս և մարդու իրաւունքը՝ լինել ինքն իր տէրը—այդ բոլոր իրաւունքները պարունակում են արդէն բնածին ազատութեան սկզբունքի մէջ և իսկապէս չեն կարող նրանից անջատուել:

Արդ, արդիւնագործական միջոցների մասնաւոր սեփականութիւնը տնտեսական անխտափելի օրէնքներով դանում է մի սարքու կողմից իրաւունք հարստահարել միւսին, անխտափելիօրէն սահմանափակում է աշխատող անհատի ազատութիւնը և դարձնում է դարձակ իրաւաբա-

բողոքի բռնածիւն հաւատարութիւնը : Այլ խօսքերով աչքիւնաչ. միջոցների մասնաւոր սեփականութիւնը անհամապատասխան է մաշդու իրաւունքին՝ ինկու ազատ և հաւասար : Այդ պատճառով սոցիալիզմը պահանջում է հասարակութեան բոլոր անդամների քրնճեցական հւստատարութիւնը և մենք կարող ենք սոցիալիզմը որոշել իբրև անտեսական կողմից հասարակութեան այնպիսի կազմակերպութիւն, երբ անկարելի է հասարակութեան մի մասի անդամների հարստացումը միւսների կողմից :

Ընդհանուր առմամբ սոցիալիզմի մէջ նկատուած են երեք գլխաւոր ուղղութիւններ, 1) կոլեկտիվիզմ, 2) կոմունիզմ և 3) անարխիզմ : Այդ երեք սոցիալիստական ուղղութիւնների վերջնական նպատակների մէջ տարբերութիւն չկայ—բոլորն էլ ձգտում են ոչնչացնելու մարդու հարստահարումը մարդով և ապահովել բողոքի անտեսական հաւասարաիրաւութիւնը : Կոլեկտիվիզմը (կամ նեղ մտքով հասկացնած սոցիալիզմը) պահանջում է իւրաքանչիւրից այն աշխատանքը, որին նա ընդունակ է և տալիս է վարձատրութիւն այն չափով որ համապատասխանում է հասարակութեան տուած նրա աշխատութեան. իւրաքանչիւրից նրա ընդունակութեան՝ համեմատ, իւրաքանչիւր ընդունակութեան, նրա գործերի համեմատ՝ ստուծ է Սեն-Սիմոնը : Կոմունիզմը ժխտում է աւելի արդինաւոր բանուորների աւելի վարձ քստանալու իրաւունքը, որովհետեւ ինքը մարդը հասարակական արդիւնք է և այս կամ այն ընդունակութիւններով ծնուելը մարդու սեփական կամքից չէ կախուած. հետաքար կոմունիզմի նշանաբանն է. իւրաքանչիւրից նրա այժերի համեմատ, իւրաքանչիւրին նրա պահանջների համեմատ, ինչպէս ձեակերպել է Կարէն : Անարխիզմի տարբե-

րութիւնը վերա յիշած երկու ուղղութիւններից կայանում է նրանում որ անարխիզմը անպայման ժխտում է հասարակական աշխատանքի ստիպողական կազմակերպումը և կարելի է համարում սոցիալիզմի վերջնական նպատակի իրագործումը, մարդկանց միանգամայն ազատ և անստիպողական գործակցութեամբ : Ըստ այդ ուղղութեան ոչ միայն պետութիւնը պէտք է անհետանայ, այլ և վերանայ ամեն մի ստիպողական հասարակական իշխանութիւն, դադարի մարու որեւէ իշխանութիւն մարդու վր : Անարխիզմի իդէալն է—անհատի շտաբեալ ապտութիւննու ինքնավարութիւնը :

Ժամանակակից հետաքրքրութիւն է ներկայացնում և (փետր. 18-ին, տարիատի դիկտատուրա) անունով իդգօսվի յօդուածը : Ռուս սոցիալ-դեմոկրատների տակտիկական սխալները քննելուց առաջ հեղինակը, որ համոզմունքով սոցիալիստ է, առաջուց նախատեսում է որ նեղ կուսակցամուրթեամբ վառուած պարոնները իսկոյն դիմելու են՝ հայհոյանքի, վարկաբեկ անող զրպարտութիւնների և այլն և այլն. չէ որ նոյնիսկ Մարքս և Էնգելսին 18 թուականին «գուաճան» անունով կնքեցին, որովհետեւ նրանք համարձակութիւն ունեցան մերկացնելու 1848 թուականի յեղափոխութեան ժամանակ կատարած մի շարք սխալները... Այդպէս են ամեն տեղ նեղ կուսակցական՝ շահերին գիտութիւնն և արդարութիւնը զոնող Փանատիկոսները, որոնք միշտ աւելի չարիք են քան բարիք առաջադիմութեան համար...

Պրոլետարիատի միահեծանութեան դադափարը բլանկիստական ծագումունի : Բլանկիստները, ստուծ է Էնգելսն, այնպիսի մարդիկ են, որոնք վարժուել են դաւադիրների դպրոցում, սովոր են դաւադրու-

թեան խիստ կարգապահութեան, կարծում են թէ համեմատաբար փոքրութիւ խիղախ, լաւ կազմակերպուած մարդկանց խումբ կարող է նպաստաւոր հանգամանքներում ձեռք զըցել իշխանութիւնը և իր ձեռներում պահել մինչև որ աջողուի ժողովրդըին գրաւել յեղափոխութեան կողմը և համախմբել նրան պարագլուխներէ մի փոքրիկ կոյտի շուրջը: Այդ հասկացողութեան դէմ էնդելսը 1893 թուականին հակադրեց իր տեսակետը. «Եթէ և ներկայ պրոլետարիատի հզօր բանակը - գրում էր նա - դեռ ևս չկարողացաւ հասնել իր նըպատակին, եթէ նա անկարող է յաղթանակել մի վճռական հարուածով, և ստիպուած է մտնը մաքառումով խել թշնամոց դիրք զիբբի յետեց - այստեղից անդառնալի կերպով հետեում է որ 1848 թուականին անկարելի էր սոցիալիստական կերպարանափոխութիւն իրագործել լոկ իշխանութիւն ձեռք զցելով»: Հին ձեկ պատմաբանութիւնը, փոքրօքային կարիները պատնէշներով հանդէրձ - շարժանակում է նա - այժմնը - շանաւոր չափով հնացել է: Գերման սոցեալ-դեմոկրատիան «ընտրողական իրաւունքը մասսան յիմարացնելու գործիքից դարձրել է ազատագրութեան գործիք»: Բանուորական կուսակցութեան լեզալ կըռիւը կառավարութեան և բուրժուազիային աւելի մեծ երկիւղ է պատճառում, քան անլեզալ կուլուր: Մենք այնպիսի տակաւններս աւելի հաստատ ենք դիմում մեր նպատակներին օրինական ճանապարհներով, քան ապօրէն: Անցել է յանկարծակի բռնկումների, դիտակից փոքրամամուլութեան զեկավարութեամբ անդիտակից մասսայի միջոցով կատարուող յեղափոխութիւնների ժամանակը: Ամբողջ հասարակական կազմի լիակատար կերպարանափոխութիւնը ենթադրում է մասսայի գործունեայ մասնակցու-

թիւնը, նրա դիտակից վերաբերմունքը զէպի այն, ինչի համար նա մաքառում է և ինչ պահանջում, Իսկ որպէսզի մասսան իմանայ թէ ինչ անի - անհրաժեշտ է երկարատև և տոկուն աշխատանք:

Այն էվոլուցիօնիստական աշխարհայեացքը որի վրայ հիմնուած է կուսական մարքսիզմը ուս սոցիալ-դեմոկրատները միանգամայն մոռացութեան տուին, քաղաքական և սոցիալիստական յեղափոխութեան տարբերութիւնը իսպառ խախտուեց, «սոցիալ-դեմոկրատները» հրէշաւոր թուչեով մարքսիստական հասկացողութիւնից ընկան ևակբերինգով լանկիզմի բմբունողութեան և տակտիկայի դիրկը: Մենք արդէն ծանօթացրինք Պիլսոնովի հայեացքների հետ այդ հարցի մասին (տես Մուրճ» № 1). Իրզօեովը համաձայն է յայտնի ուս սոցիալիստի քըննադատական վերաբերմունքին, արհամարհելով «լիբերալ», «դաւաճան» բուրժուա խօսքերով դիմացիներ վարեցնելու երախայամու բանակուտի ձեկերը: Խակ բմբոտների կուսասիրութեամբ այդ սոցիալ-դեմոկրատները տարուել էին տարերային հոսանքով և մոռացել ոչ միայն էնգելսին, այլ և կորցրել դատելու ընդունակութիւնը, չուզեաւրով որևէ կոմպրոմիսի մէջ մտնել լիբերալներէ հետ, նրանք իրանց սխալ տակտիկայով միայն ուժեղացրին բէակցիան, որ զատ զատ ջարդեց օպօզիցիան: Առողջ խելքը և պատմութեան շխար պէտք է թելադրէին պրոլետարիատի դեկավարներին այն պարզ ճըմարտութիւնը որ բիւրօկրատայի ձեռքից իշխանութիւնը կարող է լաւագոյն զէտքում անցնել լիբերալ-դեմոկրատներէ ձեռքը, որ կը տար պրոլետարիատին առնուազն պրօֆեսիօնալ միութիւններէ և մամուլի ազատութիւն, առանց որոնց բանուորներէ համար անհնարին է լայն

ծրագրով մաքառում: Կառավարութիւնը տեսնելով ընդդիմադիր կուսակցութիւնների համերաշխութիւնը, տեսնելով որ լիբերալ դեմոկրատները իսկական յենակէտ ունեն մասսայի մէջ, աստանուձեւերից և հակայեղափոխական փորձերից յետոյ ստիպուած պէտք է լինէր նահանջել և գէթ մի քանի դիրքերը յանձնել: Ասել թէ լիբերալ դեմոկրատները կամ «ЗЕМЛЯ» իշխանութիւն ձեռք ձգելով սկզբ խորէին բանուորներին՝ անհիմն է, որովհետեւ հէնց բիւրոկրատիայի օգտին գործած չլինելու նպատակով նա այդ չէր անիլ: Սակայն սոցիալ-դեմոկրատները շուրջացան ի նկատի ունենալ տակտիկական այդ պահանջը: Նրանք վճռեցին թէ իրանք մինակ բաւական ոյժ ունեն ոչ միայն բիւրոկրատիան տապալելու, այլև բուրժուազիան հարուածելու: Մամուլի մէջ և միտինգներում լիբերալների դէմ անխնայ պատերազմ էր յայտարարուած, խոշոր բուրժուազիայի դէմ իսկոյն գտնի տուեցին՝ զօրով մտցնելով ութ ժամեայ աշխատանք, մանր բուրժուազիան խրտնացրին զինուած ասպետամբութեան, անվերջ դործադուլների, տնտեսական սնանկութեան ու բուրականներով: Հետեանքը սոսկալի ջախջախում, որից շլիւղերալներին հետ տուժեցին և իրանք սոցիալ-դեմոկրատները: Համարժէք համարել գրեթե մոլորակէն է: Եւ սոցիալ-դեմոկրատները ոչ մի դիտակցութիւն չմտցրին հին շարժումով վարած ասպետամբութեան մէջ և առաջացրին մի տարերային շարժում, որ էնդեվսը հետեալ կերպով է տարբարւածել դեռ 10 տարի առաջ. ՃԱՌԱՅԻՆ խոշոր յաջողութիւնից յետոյ — յաղթական փոքրամասնութեան

մէջ սովորաբար առաջ էր գալիս պառակտում: Մի մասը բաւականանում էր ստացածով, միւսը ուզում էր առաջ ընթանալ, դնում էր նոր պահանջներ, որոնք գէթ մասամբ համապատասխանում էին ժողով: մասսայի իսկական կամ երեւակայական շահերին: Առանձին դէպքերում այդ աւելի արմատական պահանջները իրականանում էին ժողովուրդ, բայց յաճախ լոկ կարճ ժամանակով: Հափաւոր կուսակցութիւնը կրկին յաղթող էր հանդիսանում, վերջին յաղթութեան պտուղները ամբողջապէս կամ մասամբ ոչնչացւում էին: յաղթուածները այն ժամանակ ըզուում էին դաւաճանութեան մասին կամ իրանց պարտութիւնը պատահականութեան էին վերագրում: Մինչդեռ իրականապէս բանը մեծ մասամբ լինում էր այսպէս. առաջին յաղթութեան հետեանքները ամբողջում էին միայն երկրորդ յաղթանակով, աւելի արմատական կուսակցութեան յաղթանակով, իսկ դրանից յետոյ արմատականները կենսանց յաջողութիւնները նորից անհետանում էին բեմից: Եւ Յօդուածագիրը գալիս է այն եզրակացութիւն որ պէտք է միանգամայն թողնել «պրոլետարիատի դիկտատուրայի» մասին միտքը, որովհետեւ այդ մասին խօսք կարող է լինել միայն իսկական սահմանադրական-պարլամենտական իրաւակարգ հաստատուելուց յետոյ: Դաշնակցութիւնը իսկական սահմանադրականների հետ տակտիկական անհրաժեշտ քայլ է պրոլետարիատի շահերի մասին մասժողների համար: Ինչպէս տեսնում է ընթերցողը, արտայայտուած մտքերը՝ շատ մօտ են ամառադրիս յունուարի ներք. տես. մէջ պարզած տեսակէտներին:

Խմբագիր՝ Լ. Սարգսեան
 Հրատարակիչներ՝ Վ. Բաճանճեան
 Լ. Սարգսեան: